87. ՁՈԲԱՆԵՆ ՍԵՐԸ

Ընում ա, չընում մին մարթ, մին կնեգյ ըն ընում։ Էտ մարթին ընում ա օխտը ախճիգյ։

Մին օր էտ մարթին կնեգյը մրեռնում ա։ Տանը հոքսը ընգնում ա էտ մարթին յըրա։ Էտ մարթը սգիրված ա ընում, վար մին թաղա կնեգյ անե։ Ըտենց էլ անում ա։ Մին թաղա կնեգյ ա պիրում։

Թաղա կնեգյը օղում չի, վար էտ ըխճըկերքը ուրան քըշտեն ապրին։ Նա միշտ սըվըրցնում ա մարթին, վար էտ խոխեքյը ուրան աշկեն ըռաչան հըռըցնե։ Էտ խըեղճ մարթը սգիրված ա ընում կագարե կնգանը պահանջը։

Մին օր էտ մարթը նան կնեգյը պայման ըն կապում, վար հունց անին, վար էտ խոխոցը հըռըցնեն ուրանց անա։

Էտ խարդախ կնեգյը մարթին սըվըրցնում ա, ասըմ ա.— Էքյուց կասես. «Ա՛ խոխեքյ, եկեքյ քյնանք քոլը, փադ պիրինքյ»։ Կտանես խոխոցը թողես մին խոր ծորում, տու փադ անես, կյաս։

Էտ անճար մարթը ռազի յա կենում կնգանը խոսկին։ Ըտրանա ետը տըհենց էլ անում ա։ Քշըրհանը էտ մարթը ամման մին խոխեն հետե յոր ա օնում մին հաց, քյնամ ըն քոլը։

Էտ մարթն ասըմ ա.— Խոխեքյ, գյուգում ը՞ք հինչ կա, յրես ծեր պաժին հացը թուլուլ տամ, քյնացեքյ, ընդըղան պիրեքյ։

Դե խոխեքյն էլ շատ սոված ըն ընում, քյնամ ըն թուլուլ տված հացեն հետան։ Ուրուր հետա էտ մարթը հացերը թուլուլ ա տամ։ Էտ խոխեքյը քյնամ ըն ամեգյը ուրանց հացը քթանում, օտում։

Մընում ըն էտ ծորումը։ Միշնակ ախճիգյը հացը օտում ա, պըրծընում։ Մին քանե հետ ապա յա կանչում, վար ուրանց ըտեղան տուս օնե, ամմա վեչ մին սաս-սամուր չի կյամ։

Հարը փադ ա անըմ, էշին պեռնում, ուրան քյոհնա պենջակը թողում ծառան կախ տված, ինքյը քյնում տոն, վար խոխեքյը գյիդան, թա ուրանց ապան ընդեղ ա, վախեն վեչ։

Ըխճըկորանցը մեծ քերը ասըմ ա.— Վախում մեքյ, հեն ա ապան յալումը, հնե՞, պենջակը ըրեվում ա, եկեքյ քյնանք ապուն կոշտը։

Տահանք մին կերպ թումրավը պըցըրանում ըն, քյնամ, տեսնում ապա, պան չիկա, մինակ քյոհնա պինջակն ա ըտեղ քըցած։

Անգար մնացած ըխճըկերքյը սկսում ըն լաց ինիլը։

Խոսցը հարը հըսնում ա տոն, ասըմ.— Ա՛ կնեգյ, խոսկավըտ ընգի, տարի իմ ազիզ-պուղուզ խոխեքյս թուղեցե անգար ընդերու են ծմակումը։

Խորթ մարն ասըմ ա.— Հողեմ քու խոսցըտ կըլոխը, նահանք հի՞նչ օքութ ին տլական մըեզ, հազըր մունք մինակ լավ կապրինքյ, մեր պիրանին թիքյան հալալ կինի։

Ամմա էտ մարթը միշտ թաքուն խոսցը դարդան լաց ա ընում, ամմա կնգանը վեչան չի ընում։ Թողինքյ տահանք ըտեղ, խոսինքյ էն ըխճըկորանցն անա, տեսնանք հի՞նչ տաուան։

Հացեն հետան քյնացած ըխճըկերքյը ուրուր ծեն ըն տամ, քթանում, ճընապարհվում ըն ըրդա մին շեն։

Քյնամ ըն քյնամ, տեսնըմ ըն մին իշեղ ա ըրեվում։ Մեշնակ ախճիգյը ասըմ ա. — Ա՛ քեր, էն ըրեվող ճրաքյը հենց ա շենու ճրաքյ ինի՞, քյնանք, քըշերը կըմընանք ընդեղ։ Մըեզ կյուլերը օտել չը՞ն։

Քյնամ ըն, հըսնում մին կյումի, վրրդեղ վար թաքավերեն ծիանքն ա ընում կապած, շամիչըն էլ առաչնին ածած։ Էտ ըխճկերքյը քյնամ ըն կյումեն կտերը ուրուր կոխկե սոված նստում։ Լոխճան պուճուր ախճիգյը կլոխը տինում ա մեծ քվորը ծնգին, սկսում ա վըեղը քանգիլը։ Մին չամենչ ա քթանում, ասըմ ա.— Ա՛ քեր, հըսե ըստեղ քընդեցե, մին չամենչ քթա։

Էտ պուճուր ըխճկանը լոխ էլ եշում ըն, ուրանք էլ մին չոփ ըն յոր օնում, սկսում կյումին ըխպըհարը քանդիլը։ Ըստեղ լոխ էլ չամենչ ըն քթանում, օտում։ Քնդելավ մին ծակ ա պենվում։

Մեծ քերը ասըմ ա. — Հու կըմըտնե էս ծակավը, տեսնա մեչին չամենչ կա՞, տուս օնե, պիրի օտենքյ։

Էլհա պուճուր ախճիգյն ա նի մննում, տեսնում թաքավերեն

ծիանքը կապած, չամենչըն էլ առաչնին ածած։ Կյոքյը մին լավ չամ-չավ լըցնում ա, տունս կյամ, պիրում տամ մնացած քվորցը, օտում ըն, ըտեղ էլ ապրում։

Մին օր թաքավերը ուրան նազիր-վազիրին ասըմ ա.— Ծիս պեր նըստիմ, քյնամ ըմ կործավ օրիշ տըեղ։

Ծին պիրում ըն։ Թաքավերը տեսնում ա լըղարած։

Նազիրին ասըմ ա. — Թա միչև մին էրկու օրը գյըդացեր վեչ, թա հո՞ւ վա ետ չամենչը օտում, քյրեզ կործա հննական ըմ։

Մին քշեր ծիապանը ախոռումը կյողլ ա կենում, տեսնում էն ա մին կուճուր ախչիգյ, կինար մին տաս տրեկան, նի մըտավ կյումը, կյոքյը չամչավ լցավ, օղից վար ծակավը տունս կյա։

Էտ վախտը նազիրը մըտածում ա, ասըմ ա. «Բուրդան փրռնիմ, կըվախե, պաց թողիմ, ծիյին վնաս ա»։

Որոշում ա, վար դինշ մուտանա, ասե. «Տու հո՞ւ վըս»։

Նազիրը կենում ա, էտ ախճիգյը տունս ա կյամ կտերը, ինքյն էլ ա տունս կյամ, ասըմ. — Էտ հի՞նչ իլլաթ-միլլաթ ըք, վար առանց հըրցընելե թաքավերեն ծիյին փայը յոր ըք օնում, օտում, ծիյին մըշվըցնում։

Մեծ քվերքը նաղլ ըն անըմ, վար ուրանք եթիմ խոխեքյ ըն, խորթ մոր դարդան ընգալ ըն ըտեղեքյ։

Նազիրըն ասըմ ա.— Մեր թաքավերը լհա արհեստավերի հեռա յա շոռ կյամ, վար կործ տա, պահե։

Ըխճըկերքյը ասըմ ըն. — Վախըմ ընք, թա մըեզ խափիս, տանիս, մըեզ կտորել տաս։

Նազիրը տահանց ըրխըյնըցընում ա, թաքավերեն կոշտը տանըմ, ասըմ.— Թաքավերն ապրած կենա, քըթալ ըմ ծիյին չամենչը օտողներեն։

Թաքավերը էնքան պարի մարթ ա ընում, վար տահանց մին ցորտ խոսկ էլա ասում չի, անչախ պիրում ա տահանց լավ ուտըցնել տամ, լավ կյենալի շորեր ա տամ տահանց, ամմեն մինին էլ մին կործի յա տընում։ Պտի ասիմ, վար էտ ըխճըկորանցը մեչին պուճուր ախճիգյը լոխան կյեղեցիկըն ա ընում։ Տրան թաքավերը կյըռնարածի կործ ա տամ։

Մին օր էտ ախճիգյը կյառները տանում ա հանդը, համ էլ իլիգյ ա մանըմ։ Մին օր հանդին մին չորան տեսնում ա էտ ըխճըկանը, սկսում ա ընդրա նհետ սեր փշրիլը։

Էտ ախճիգյը ասըմ ա.— Տա իմ պանը չի, թաքավերան հըրցըրու։

Զորանը քյնում ա թաքավերեն կոշտը, ասըմ.— Թաքավերն ապրած կենա, թողեր սերտըս պանամ քշտեստ։

Թաքավերը թուլ ա տամ։ Զորանը նաղլ ա անըմ, վար ինքյը սիրում ա կյառնը պահող ըխճրկանը։ Էն ախճիգյն էլ ուրան ա սիրում։

Թաքավերն ասում ա. — Ա՛յ չորան, թա կարաս կատարիս իմ ըսըծնես, ախճիգյը քյրեզ ինի։ Քյրեզ տամ ըմ էրկու չրվալ ցորեն, թա կարաս մին օրում համ վարիս, համ հրսցընիս, համ հնձիս, կալսիս, ցորեն շինիս, աղճիգյը քյրեզ ըմ տըլական։

Զորանը տխուր-տրտում քյնամ ա շադու պառավեն կոշտը։

Պառավը նրան թահրերը լոխ սրվըրցընում ա, համ էլ մին կախարթական մուտանա յա տամ էտ չորանեն, ասում.— Կըքյնաս մին հանդրմ վրեննը կենաս, սրտիտ օղածը մուտանեն ասիս, նա լոխ կադարիլու յա։

Զորանը քյնում ա, մին մեծ դուզում վրեննը կենում, ուրան սրտին դարդը ասըմ մուտանեն, տա էլ կադարում ա։ Մին օրվա մեչի ցորենը հրվաքում ա, ածում չրվրլնեն, պիրում թաքավերեն տոնը։

Ասում ա. — Թաքավերն ապրած կենա, հրամմանըտ կըդարալ ըմ, ախճիգյը տամ ը՞ս, թա՞ տամ չըս։

Թաքավերն ասում ա.— Հալա չէ, մին պան կա, վար ըն էլ կադարիս տըլական ըմ։ Ա՛յ չորան, թա կարիս շվետ ըծելավ վրխճըրներեն պըցըրցընիս ըշտըրակեն կլոխը, ախճիգյը քունն ա։

Զորանը քյնում ա, նըստում թաքավերեն շինիլ տված ըշտարակեն կլխեն, սկսում շվեն ածելը։ Վրխճըրնեն պըցըրանում ըն, պըցրանում, մին կոտրած տեղ ըն հանում, ընդեղ էլ լհա ուրուր հետա վեր ըն տառնում, սրտկոտում։

Զորանը երե զոլան ասում ա.— Ախճիգյը տամ ը՞ս, թա չէ։

Թաքավերն ասում ա.— Վար տու կըրեցալ չըս քու շվետ ըծելավ վրխճըրնեն հրսցընիս քու կոշտըտ, ախճիգյը քյրեզ չի հրսնիլ։

Զորանը տրեսնում ա, վար հրսավ վեչ ուրան նպատակեն, ուրան աշտարական քցում ա տափը, տրհենց էլ մեռնում ա։